



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/4681/02/16  
2024թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/4681/02/16

Նախագահող դատավոր՝ Ն. Կարապետյան

Դատավորներ՝

Կ. Զիլինգարյան

Լ. Գրիգորյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող

Գ. ՀԱԿՈՐՅԱՆ

զեկուցող

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 09-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ  
պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ  
Ընկերության հայցի ընդդեմ Աշոտ Զաքարյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և  
ըստ Աշոտ Զաքարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու  
պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Աշոտ Զաքարյանից բռնագանձել  
4.480.000 ՀՀ դրամ, սկսած 09.03.2016 թվականից այդ գումարին հաշվեգրել ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, և 89.600 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Աշոտ Զաքարյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 45.199.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և այդ գումարին հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ սկսած 13.02.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.03.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.10.2022 թվականի որոշմամբ Աշոտ Զաքարյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 14.03.2022 թվականի վճիռը՝ հակընդդեմ հայցը մերժելու մասով, բեկանվել և փոփոխվել է հետևյալ կերպ.

«(...) 2. Աշոտ Յաշկայի Զաքարյանի հակընդդեմ հայցն ընդդեմ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարել մասնակի:

2.1. «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ Աշոտ Յաշկայի Զաքարյանի բռնագանձել 23.699.000 (քսաներեք միլիոն վեց հարյուր իննսուսինը հազար) ՀՀ դրամ: Մնացած՝ 21.500.000 ՀՀ դրամի մասով հակընդդեմ հայցը մերժել:

2.2. 23.699.000 (քսաներեք միլիոն վեց հարյուր իննսուսինը հազար) ՀՀ դրամի նկատմամբ 13.02.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ և բռնագանձել «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ Աշոտ Յաշկայի Զաքարյանի: Մնացած՝ 21.500.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ հաշվարկելու և բռնագանձելու պահանջների մասով հակընդդեմ հայցը մերժել: (...):»

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Սամվել Սիմոնյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք) 47-49-րդ, 51-րդ, 53-րդ և 132-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 408-րդ, 436-րդ, 877-րդ ու 878-րդ հոդվածները, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-65-րդ հոդվածներն ու «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 25-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեր:

*Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պարճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 83.959.000 ՀՀ դրամի չափով փոխառության իրավահարաբերությունների առկայությունն ապացուցելու նպատակով Աշոտ Զաքարյանը վկայակոչել է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ հաշվեկշիռը և դրանում այդ գումարը ներառված լինելու հանգամանքը, մինչդեռ բացակայել է իրավական հիմքը, իսկ նշված բաժանիչ հաշվեկշիռը միակողմանի կազմված փաստաթուղթ է՝ առանց իրավահարաբերության մասնակիցների ստորագրության կամ կնիքի: Ավելին՝ Վերաքննիչ դատարանն արժանահավատ է համարել բաժանիչ հաշվեկշռում նշված 83.959.000 ՀՀ դրամի չափով փոխառության մասին տեղեկությունը, մինչդեռ հաշվի չի առել, որ այն կազմվել է այդ պահին «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների կողմից:

Վերաքննիչ դատարանը չի պարզել փոխառության իրավահարաբերությունների առկայությունը և պարտավորության՝ իրեն փոխանցված լինելու հանգամանքը, արդյունքում հաշվի չի առել, որ եթե Աշոտ Զաքարյանի և «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված փոխառության պայմանագիր առկա չէ, ապա գոյություն չունեցող պարտավորություն չէր կարող փոխանցվել իրեն:

Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա չի դարձրել «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունից 83.959.000 ՀՀ դրամը, որպես պարտավորություն, իրեն անցնելու կամ այն իր կողմից ընդունված լինելու փաստերը, որը պետք է բխեր «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության առանձնացման ճանապարհով վերակազմակերպման «Կարգ և պայմանների» 3-րդ կետից: Ընդ որում, նշված «Կարգ և պայմանների» 3-րդ կետը Վերաքննիչ դատարանը չի դիտարկել որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ, ինչպես նաև բողոքարկվող որոշման պատճառաբանական մասում չի անդրադարձել «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների կողմից 16.01.2012 թվականին կայացված թիվ 1.7 որոշմանն ու նշված «Կարգ և պայմաններ»-ին՝ չնայած վերաքննիչ բողոքի պատասխանում ինքը վկայակոչել է դրանք: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործում առկա չէ իր և «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ բաժանիչ հաշվեկշռի իրավաչափության հարցը չի քննարկվում, և դրանում ներառված այլ պարտավորությունների մասով առկա են համապատասխան պայմանագրեր ու փաստաթղթեր: Տվյալ դեպքում քննարկման առարկան ոչ թե բաժանիչ հաշվեկշիռն է, այլ դրանում նշված 83.959.000 ՀՀ դրամի չափով փոխառության առկայությունը և դրա՝ օրենքով նախատեսված պայմաններին համապատասխանելը:

Տվյալ դեպքում Աշոտ Զաքարյանը չի ապացուցել իր վկայակոչած փոխառության իրավահարաբերության առկայության փաստը, ինչպես նաև չի ներկայացրել փոխառության պայմանագիր կամ որևէ այլ փաստաթուղթ, ինչը կհաստատեր, որ «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունն Աշոտ Զաքարյանի նկատմամբ ունի պարտավորություն, որն էլ բաժանիչ հաշվեկշռով անցել է իրեն:

Վերաքննիչ դատարանը 29.08.2013 թվականի ելքի օրդերով 22.300.000 ՀՀ դրամի փոխառության մարումը համարել է Աշոտ Զաքարյանի 83.959.000 ՀՀ դրամի փոխառության

մասնակի մարման գումար, այլ կերպ ասած ընդունում, մինչդեռ չի պատճառաբանել, թե այն ինչու է 83.959.000 ՀՀ դրամի փոխառության և ոչ թե 21.500.000 ՀՀ դրամի փոխառության մարում: Ավելին՝ Աշոտ Զաքարյանը չի ներկայացրել ապացույց, թե փոխանցված գումարները որ փոխառության մարումներն են: Արդյունքում պարզ չէ՝ դրանք ուղղվել են 83.959.000 ՀՀ դրամի, 21.500.000 ՀՀ դրամի՞, թե այլ փոխառությունների մարմանը:

Վերաքննիչ դատարանը թվաբանական հաշվարկներ է ներկայացրել և անտեսել, որ 29.08.2013 թվականի ելքի օրդերով մարվել է Աշոտ Զաքարյանի 21.500.000 ՀՀ դրամի չափով փոխառության գումարը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ հակընդդեմ հայցը բավարարելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 10.10.2022 թվականի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի 14.03.2022 թվականի վճռին, կամ այդ մասով փոփոխել Վերաքննիչ դատարանի 10.10.2022 թվականի որոշումը՝ հակընդդեմ հայցը մերժել, կամ գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը՝ մասնակցությամբ տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերեր Աշոտ Զաքարյանի և Հասմիկ Հովսեփյանի, ինչպես նաև գլխավոր հաշվապահ Կարապետ Ստեփանյանի, 16.01.2012 թվականին նաև որոշել է՝

- առանձնացման ճանապարհով նոր՝ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու միջոցով վերակազմակերպել «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունը,

- հաստատել «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը («ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռներն առանձնացումից առաջ և հետո 01.01.2012 թվականի դրությամբ, «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաշվեկշիռը),

- «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռն համապատասխան՝ վերակազմակերպված «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը և վերակազմակերպման արդյունքում ստեղծված «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն են փոխանցվում «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության իրավունքները և պարտականությունները (**հատոր 3-րդ, գ.թ. 160-165**).

2) «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր ժողովը՝ մասնակցությամբ հիմնադիր-մասնակիցներ Աշոտ Զաքարյանի և Հասմիկ Հովսեփյանի, 16.01.2012 թվականին նաև որոշել է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունից առանձնացման ճանապարհով հիմնադրել «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կազմակերպարավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի ստեղծման

նպատակն է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը **(հատոր 3-րդ, գ.թ. 156-159)**.

3) «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռի (այսուհետ նաև՝ Հաշվեկշիռ) համաձայն՝ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որին փոխանցվում են «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող և նույն բաժանիչ հաշվեկշռում նշված ակտիվներն ու պասիվները, այլ իրավունքները և պարտականությունները:

Հաշվեկշռում նշված է՝ «10. ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ բանկային վարկեր և փոխառություններ, որից (...) փոխառություն Աշոտ Զաքարյանից՝ 83.959.000» **(հատոր 3-րդ, գ.թ. 176-178)**.

4) 26.06.2019 թվականին Դատարանը կողմերի միջև բաշխել է ապացուցման պարտականությունը հետևյալ կերպ՝ սկզբնական հայցի մասով հայցվորը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ պատասխանողը պետք է ապացուցի սկզբնական հայցի մասով իր առարկությունների հիմքում դրված փաստերը: Հակընդդեմ հայցի մասով հայցվորը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ պատասխանողը՝ իր առարկությունների հիմքում դրված փաստերը (նշվել է, որ հակընդդեմ հայցի մասով կարևորվում են այն փաստերը, որ 83.959.000 ՀՀ դրամ փոխառությունն անցել է բաժանիչ հաշվեկշռով, 21.500.000 ՀՀ դրամ փոխառության գումարը տրամադրվել է դրամարկղային մուտքի օրդերներով, ընդհանուր պարտավորությունը կազմում է 105.459.000 ՀՀ դրամ, որից 60.260.000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը կատարվել է, իսկ պարտքի գումարը կազմում է 45.199.000 ՀՀ դրամ) **(հատոր 3-րդ, գ.թ. 134-137, հիմք՝ 26.06.2019 թվականի դատական նիստի ձայնային արձանագրություն):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին՝ արդյո՞ք բաժանիչ հաշվեկշիռը կարող է դիտարկվել փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստը հաստատող թույլատրելի ապացույց՝ վերահաստատելով նախկինում արդարահայտած իր դիրքորոշումները:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սույն քաղաքացիական գործը քննվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանում, ուստի հիմք ընդունելով նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը՝ նույն դատարանը գործը պետք է քննել ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի նորմերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում որևէ ապացույցի թույլատրելիության հարց լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

1) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով,

2) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում,

3) գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև **նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, այլ ապացույցների կիրառումը բացառվում է, կամ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ (տե՛ս «ՋԻ ԷՅՋ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅԶՍ» ՍՊԸ-ն ընդդեմ Սևակ Արզարունու և Արտյոմ Մարտիրոսյանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ թույլատրելիության ընդհանուր կանոնից բխում է, որ բացի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացուցման միջոցներից՝ դատարանն իրավունք չունի կիրառելու այլ ապացույցներ, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը կարգավորում է այն հարցը, թե նշված ապացուցման միջոցներից որի կիրառումն է թույլատրում կոնկրետ իրավահարաբերությունը, գործարքը կամ իրավաբանական փաստը հաստատելիս, **այդ հարցը լուծվում է նյութական իրավունքի նորմերով**: Ապացույցների վերաբերելիության կանոնը կիրառելիս դատարանը ղեկավարվում է իր ներքին համոզմամբ, իսկ թույլատրելիության կանոնը կիրառելիս՝ միայն օրենքով, որը մի շարք դեպքերում ուղղակիորեն արգելում է օգտվել այս կամ այն ապացուցման միջոցից, թեկուզև այն վերաբերի գործի փաստերին (տե՛ս Կարեն Քալանթարյանն ընդդեմ Մուշեղ Շախկույանի, երրորդ անձ Մարգարիտ Մարտիրոսյանի թիվ ԱՎԴ/0412/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցին ներկայացվող պահանջներից մեկը դրա **թույլատրելիությունն է**, որն իրենից ենթադրում է աղբյուրների, տեղեկությունների ստացման մեթոդների և հնարքների օրինականության տեսակետից դրա պիտանի լինելը:

Ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցի լուծումը ապացույցների գնահատման բաղկացուցիչ մասն է: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր և տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանը եզրահանգում է կատարում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության ու ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունն ու փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, **թույլատրելիության**, արժանահավատության ու բավարարության տեսանկյունից (տե՛ս «Շենքերի կառավարում» համադիրությունն ընդդեմ Մասիս Ղազանչյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

«Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է **այդ ապացույցը վերաբերելի ու թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար** (տե՛ս Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով «Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

«Վճռաբեկ դատարանը հավելել է, որ դատարանի կողմից իր ներքին համոզմունքի հիման վրա ապացույցների գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, **թույլատրելիության**, արժանահավատության ու բավարարության տեսանկյունից, որի միջոցով որոշվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա փաստի հաստատված կամ հերքված լինելու, ինչպես նաև վիճելի լինելու հարցը: Գործի քննության ընթացքում գործով ներկայացված ապացույցները դատարանի կողմից ենթակա են հետազոտման դրանց առանձին-առանձին և իրենց համակցությամբ ստուգելու, դրանց միջև հակասությունների վեր հանման ու ապացույցների ամբողջական համակարգ ստեղծելու միջոցով (տե՛ս Աննա Պողոսյանն ընդդեմ Գևորգ Սարգսյանի, Մխիթար Սարգսյանի, Ալվարդ Սաֆարյանի թիվ ԱՐԱԴ/2261/02/18 քաղաքացիական գործով «Վճռաբեկ դատարանի 17.07.2023 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը գործում առկա ապացույցները գնահատելիս պետք է պահպանի դրանց **թույլատրելիության վերաբերյալ կանոնները**, որի հաշվառմամբ միայն պետք է որոշի համապատասխան փաստի հաստատված լինելու կամ չլինելու հարցը: Ընդ որում, որևէ փաստի հաստատմանը ծառայող ապացույցներ ներկայացնելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (օրինակ՝ ոչ թույլատրելի ապացույցներ ներկայացնելու) անբարենպաստ հետևանքները պետք է դրվի այդ փաստը վկայակոչած անձի վրա:

«Քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

«Քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել **փոխառուի տված ստացականը** կամ **փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ**:

«Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, փոխառության պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, **ապացույցների թույլատրելիության շրջանակը սահմանափակել է միայն գրավոր ապացույցներով**՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ցանկացած փաստաթուղթ, որը կհաստատի փոխառության հարաբերությունների առկայությունը: Օրենսդիրը, պարտադիր համարելով փաստաթղթի



ներկայացումը, չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկ՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը **կհաստատվի փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը** (տե՛ս Հրանտ Ավետիսյանն ընդդեմ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ինչպես ցանկացած պայմանագիր, փոխառության պայմանագիրը ևս կամային ակտ է: Այսինքն՝ փոխառության իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը՝ փոխառուն և փոխատուն, հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունը փոխառության պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի փոխատուի դեպքում՝ փոխառուին դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք հանձնելուն, իսկ փոխառուի դեպքում՝ փոխատուից ստացված գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ փոխառության իրավահարաբերության ծագումն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով: Ընդ որում, քանի որ կամահայտնությունը կամքի արտահայտման արտաքին դրսևորումն է, հաշվի առնելով փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ժամանակագրական առումով դրանք պետք է համընկնեն: Այսպես, փոխառության պայմանագիրը ռեալ գործարք է, այսինքն՝ կնքված է համարվում դրամը կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույքը հանձնելու պահից, ինչը նշանակում է, որ մինչ փոխառության առարկայի փոխանցումը կամ դրանից անմիջապես հետո արդեն իսկ օրենքով **սահմանված ձևով պետք է ձևակերպված լինի փոխառության պայմանագիրը կամ փոխառության առարկայի փոխանցումը հավաստող գրավոր այլ փաստաթուղթը** (տե՛ս Ժիրայր Հակոբյանն ընդդեմ Ռուզաննա Վարդանյանի թիվ ԵԷԴ/0313/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ փոխառությունն իր բնույթով դրամական շարժի՝ փոխատուից փոխառուին դրամական միջոցներ փոխանցելու վերաբերյալ իրավահարաբերություն է, որի առկայության փաստը կարող է հիմնավորվել ցանկացած գրավոր ապացույցով: Ընդ որում, փոխառության հարաբերությունների առկայությունը հաստատող **թույլատրելի ապացույց է** հանդիսանում նաև ցանկացած այն փաստաթուղթը, որում **պարունակվող տեղեկությունները** վկայում են **փոխառության հարաբերությունների գոյության մասին**:

ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը կարգավորում է բազմաթիվ իրավահարաբերություններ, որոնց ընթացքում տեղի են ունենում գույքի, այդ թվում՝ դրամի հանձնումներ կամ փոխանցումներ, ուստի փոխառության իրավահարաբերություն վկայակոչած անձը նախ պետք է ապացուցի, որ.

- ա) գույքը (դրամը) հանձնվել է որպես փոխառություն,
- բ) փոխառուն պարտավորվել է այն վերադարձնել:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը կարող է հաստատված համարել փոխառուի կողմից գումարի վերադարձնելու պարտավորություն ունենալու հանգամանքը նաև այն դեպքում, երբ փոխառուն ընդունել է այդ փաստը (*տե՛ս «Սուարդի» բաժնեփրական ընկերությունն ընդդեմ Սուրեն Ավագյանի թիվ ԵԿԴ/4647/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.09.2021 թվականի որոշումը*):

Զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ երկկողմ կամ բազմակողմ գործարքը իրավական հետևանքներ կարող է առաջացնել միայն գործարքը կնքող **կողմերի կամահայտնության առկայության դեպքում**, որոնք հետապնդում են սեփական իրավական նպատակները: Երկկողմ կամ բազմակողմ գործարքում կողմերի կամահայտնությունը պետք է ունենա հանդիպակաց և համընկնող բնույթ: Կամահայտնության հանդիպակաց բնույթը պայմանավորված է կողմերի փոխադարձ բավարարվող շահերով, իսկ կամահայտնության համընկնող բնույթը նշանակում է դրանց փոխադարձ համաձայնեցում և վկայում է կողմերի միջև համաձայնության հասնելու մասին: Հետևաբար, կողմերի փոխադարձ կամահայտնության և փոխադարձ համաձայնեցման շնորհիվ երկկողմ գործարքը, որպես կողմերի համաձայնագիր, քաղաքացիական շրջանառության մեջ է դրվում որպես մեկ միասնական կամային ակտ՝ պայմանագրի տեսքով:

Փոխառության պայմանագիրը, հանդիսանալով կողմերի կամահայտնության արդյունքում կնքվող ակտ, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն, հանդիսանում է գրավոր գործարք և **կնքվում է փաստաթուղթ կազմելու միջոցով**, որը պետք է ստորագրված լինի գործարք կնքող անձանց կողմից և պարունակի գործարքի բովանդակությունը: Հետևաբար՝ փոխառության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունը պայմանագրի կնքման վերաբերյալ, որը դրսևորվում է նաև պայմանագիրը ստորագրելու միջոցով (*տե՛ս Վահան Դերսահակյանն ընդդեմ «Ալրլաս Թոչնաբուծական Ֆարրիկա» ՓԲԸ-ի թիվ ԱՎԴ/2596/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2022 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև փոխառության իրավահարաբերությունների առկայությունը կարող է հաստատվել գրավոր ապացույցներով, այդուհանդերձ ցանկացած գրավոր ապացույց չէ, որ այդ փաստի հաստատմանն ուղղված թույլատրելի ապացույց է: Այսպես՝

Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 2-րդ կետով թույլատրել է միայն որոշակի ապացույցների օգտագործումը, ինչպիսիք են՝ փոխառության պայմանագիրը, ստացականը կամ **ցանկացած այլ գրավոր ապացույցը, որը հաստատում է փոխառության առարկան՝ դրամական գումարը կամ որոշակի քանակի գույքը փոխառուի կողմից փոխառուին որպես փոխառություն հանձնված լինելու փաստը**: Այլ կերպ ասած՝ իրավունքի նորմը, սահմանելով փոխառության իրավահարաբերությունների առկայությունը հաստատող գրավոր ապացույցների թույլատրելի շրջանակը, միաժամանակ բացառել է դրանով չնախատեսված՝ գրավոր այլ ապացույցների օգտագործման հնարավորությունը:

Շարադրվածի արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստի հաստատմանն ուղղված թույլատրելի

ապացույցներ են բացառապես փոխառության պայմանագիրը, ստացականը կամ **ցանկացած գրավոր այլ ապացույցը, որը հավաստում է փոխառության առարկան փոխադրուի կողմից փոխառուին ի սեփականություն հանձնված լինելու և վերջիս կողմից այն ընդունված լինելու կողմերի հանդիպակաց ու համընկնող կամահայտնության մասին**: Այսինքն՝ փոխառության պայմանագրից կամ ստացականից տարբերվող գրավոր այլ ապացույցը փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստի հաստատման թույլատրելի ապացույց կարող է լինել միայն այն դեպքում, եթե պարունակում է տեղեկություններ փոխառության առարկան փոխադրուի կողմից փոխառուին որպես փոխառություն հանձնված լինելու մասին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ վկայակոչված ապացույցների բացակայության դեպքում գործին մասնակցող անձը զրկվում է փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստը հաստատելու համար այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից՝ իրավունքի նորմով չնախատեսված այլ ապացույցների օգտագործումն անթույլատրելի լինելու պատճառաբանությամբ՝ կրելով նաև փաստի վիճելի մնալու դատավարական հետևանքները:

### **Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ**

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 10.10.2022 թվականի որոշման դեմ Ընկերությունը վճռաբեկ բողոք է ներկայացրել **հակընդդեմ հայցի բավարարման մասով**, և հիմք ընդունելով վճռաբեկ բողոքի հիմքերով ու հիմնավորումներով սահմանափակված լինելու կանոնը՝ Վճռաբեկ դատարանն անդրադառնում է միայն հակընդդեմ հայցի բավարարման կապակցությամբ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին:

Սույն գործով հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Աշոտ Զաքարյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 45.199.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և այդ գումարին հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ սկսած 13.02.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը:

26.06.2019 թվականին Դատարանը կողմերի միջև բաշխել է ապացուցման պարտականությունը հետևյալ կերպ՝ սկզբնական հայցի մասով հայցվորը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ պատասխանողը պետք է ապացուցի սկզբնական հայցի մասով իր առարկությունների հիմքում դրված փաստերը: Հակընդդեմ հայցի մասով հայցվորը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ պատասխանողը՝ իր առարկությունների հիմքում դրված փաստերը (նշվել է, որ հակընդդեմ հայցի մասով կարևորվում են այն փաստերը, որ 83.959.000 ՀՀ դրամ փոխառությունն անցել է բաժանիչ հաշվեկշռով, 21.500.000 ՀՀ դրամ փոխառության գումարը տրամադրվել է դրամարկղային մուտքի օրդերներով, ընդհանուր պարտավորությունը կազմում է 105.459.000 ՀՀ դրամ, որից 60.260.000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը կատարվել է, իսկ պարտքի գումարը կազմում է 45.199.000 ՀՀ դրամ):

Ի հավաստումն 83.959.000 ՀՀ դրամ փոխառության առկայության՝ Աշոտ Զաքարյանը դատարան է ներկայացրել հետևյալը՝

- «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 16.01.2012 թվականի թիվ 04 արձանագրությունը, որի համաձայն՝ որոշվել է

է առանձնացման ճանապարհով նոր՝ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու միջոցով վերակազմակերպել «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունը և հաստատել «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը,

- «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը, որի համաձայն՝ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որին փոխանցվում են «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող և նույն բաժանիչ հաշվեկշռում նշված ակտիվներն ու պասիվները, այլ իրավունքները և պարտականությունները: Հաշվեկշռում նշված է՝ «10. ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ բանկային վարկեր և փոխառություններ, որից (...) փոխառություն Աշոտ Զաքարյանից՝ 83.959.000»:

Դատարանը, անդրադառնալով 83.959.000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ հաշվեկշռով հաստատված լինելու մասին Աշոտ Զաքարյանի փաստարկին, այն հիմնավորված չի համարել և 14.03.2022 թվականի վճռով հակընդդեմ հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ «(...) փոխառության իրավահարաբերությունները հաստատված են համարվում վերը նշված օրենսդրական կարգավորմամբ, այն է՝ մեկ կողմը (փոխադրող) մյուս կողմին (փոխառու) որպես սեփականությանն պետք է հանձնի դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք: Սույն գործով Հակընդդեմ Հայցվորի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, ինչը կհաստատի, որ Աշոտ Զաքարյանի կողմից՝ «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» ՓԲ ընկերությանը փոխառությամբ տրամադրվել է 83.959.000 ՀՀ դրամ՝ փոխառուի տված ստացական կամ փոխադրողի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ, չներկայացվեց նաև նշված գումարը կանխիկ կամ «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» ՓԲ ընկերության բանկային հաշվին մուտքագրելու վերաբերյալ որևէ ապացույց: Հակընդդեմ Հայցվորի կողմից դատարանի չի ներկայացվել 83.959.000 ՀՀ դրամը, որպես փոխառություն կնքման ժամանակահատվածը, առկա չէ փոխադրող և փոխառու իրավահարաբերությունը հաստատող երկկողմանի կազմված փաստաթուղթ: (...)»:

Վերաքննիչ դատարանի 10.10.2022 թվականի որոշմամբ Աշոտ Զաքարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 14.03.2022 թվականի վճիռը՝ հակընդդեմ հայցի մասով, բեկանվել և փոփոխվել է՝ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ այն պատճառաբանությամբ, որ՝

- «(...) 16.01.2012 թվականի՝ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրության համաձայն՝ որոշվել է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունից առանձնացման ճանապարհով հիմնադրել «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն անվանումով «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» կազմակերպարավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Նույն օրը «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 1.6. որոշմամբ հաստատվել է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ հաշվեկշիռը, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կենտրոնական մարմնի կողմից 27.01.2012 թվականին կատարվել է գրանցում: Բաժանիչ հաշվեկշռում նշվել է, որ ցուցանիշները ներկայացված են 01.01.2012 թվականի դրությամբ, իսկ բաժանիչ հաշվեկշռի 10-րդ կետում նշված է՝ «ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ բանկային վարկեր և փոխառություններ, որից (...) փոխառություն Աշոտ Զաքարյանից՝ 83.959.000»:

- «Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ վերակազմակերպվող ընկերության ընդհանուր ժողովի կողմից հաստատված և լիազոր մարմնի կողմից գրանցում ստացած բաժանիչ հաշվեկշռով վերակազմակերպվող ընկերությունը ընդունել է հաշվեկշռում նշված պարտավորությունների գոյությունը 01.01.2012 թվականի դրությամբ, հստակորեն արտահայտել է իր կամահայտնությունը թե՛ կոնկրետ անձանց նկատմամբ կոնկրետ չափով պարտավորությունների առկայության, թե՛ նոր ստեղծվող իրավաբանական անձին դրանք փոխանցելու վերաբերյալ, իսկ օրենքով սահմանված կարգով հաստատված և գրանցված բաժանիչ հաշվեկշռը համարվում է փոխանցվող պարտավորությունների վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ՝ հավաստելով բաժանիչ հաշվեկշռի կազմման պահին Աշոտ Յաշկայի Զաքարյանի հանդեպ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 83.959.000 ՀՀ դրամի չափով պարտավորության ճանաչման փաստը: (...)»:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավորված չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում ի հավաստումն իր և «Վայք Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության միջև փոխառության իրավահարաբերությունների առկայության՝ Աշոտ Զաքարյանը Դատարան չի ներկայացրել փոխառության պայմանագիր կամ ստացական: Ինչ վերաբերում է Հաշվեկշռին, ապա այն, որպես գրավոր այլ ապացույց, **չի պարունակում որևէ տեղեկություն Աշոտ Զաքարյանի կողմից «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը 83.959.000 ՀՀ դրամ փոխանցված լինելու մասին:** Հաշվեկշռում միայն առկա է «10. ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ բանկային վարկեր և փոխառություններ, որից (...) փոխառություն Աշոտ Զաքարյանից՝ 83.959.000» գրառումը, որը ոչ միայն չի հաստատում նշված փաստը, այլ նաև չի վկայում 83.959.000 ՀՀ դրամը որպես փոխառություն Աշոտ Զաքարյանի կողմից «Վայք Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությանն ի սեփականություն հանձնված լինելու և վերջինիս կողմից որպես այդպիսին ընդունված լինելու կողմերի հանդիպակաց ու համընկնող կամահայտնության մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հաշվեկշռի հիման վրա Աշոտ Զաքարյանի և «Վայք Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության միջև փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստը հաստատելիս Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հաշվեկշռը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ապացույցների շրջանակից դուրս գրավոր ապացույց է, ուստի որպես իրավունքի նորմով չնախատեսված գրավոր այլ ապացույց՝ դրա օգտագործումը վկայակոչված փաստի հաստատման նպատակով անթույլատրելի է:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված են Վերաքննիչ դատարանի կողմից անթույլատրելի ապացույցի հիման վրա փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստը հաստատված լինելու և

այդկերպ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի խախտումներ թույլ տրված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 26.06.2019 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում Դատարանը հակընդդեմ հայցի մասով Աշոտ Զաքարյանի վրա է դրել իր վկայակոչած փաստերը, այդ թվում՝ 83.959.000 ՀՀ դրամի չափով փոխառության իրավահարաբերության առկայության փաստն ապացուցելու պարտականությունը, որը Աշոտ Զաքարյանը պատշաճ չի կատարել, մասնավորապես այդ փաստի հաստատմանը ծառայող թույլատրելի գրավոր ապացույց չի ներկայացրել, ուստի դրա վիճելի մնալու բացասական հետևանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան պետք է կրի ինքը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշում է, որ Աշոտ Զաքարյանի և «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության միջև փոխառության իրավահարաբերություններ ծագած լինելու փաստի հաստատմանը ծառայող թույլատրելի ապացույց ներկայացված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը քննարկել է «ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունից այդ «պարտավորությունն» Ընկերությանը փոխանցված լինելու հարցը՝ եզրակացնելով, որ «բաժանիչ հաշվեկշռում որևէ պարտավորության գոյության մասին նշելն առնվազն ենթադրում է այդ պարտքի ճանաչում»: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտքի ճանաչման անհրաժեշտ պայմանը պարտավորության գոյությունն է, տվյալ դեպքում՝ փոխառության իրավահարաբերությունը, որի առկայությունը թույլատրելի որևէ ապացույցով հաստատված չէ: Այսինքն՝ դատավարական իրավանորմերի տեսանկյունից հաստատված չէ պարտավորության գոյությունը, ուստի դրա արդյունքում գոյացած ենթադրյալ պարտքի փոխանցման և ճանաչման հարցերի քննարկումն առարկայազուրկ է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների խախտում թույլ տրված լինելու, ու այդ խախտմամբ արդարադատության բուն էությունը խաթարված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկը հիմնավորված է, որպիսի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 10.10.2022 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ սույն գործով քննարկման առարկա չի դարձվել այն հարցը, թե գործում առկա՝ Ընկերության կողմից Աշոտ Զաքարյանին գումար փոխանցելու ստացականներն ինչպիսի պարտավորության շրջանակներում են տրվել և որ պարտավորությունների մարմանն են ուղղված եղել, իսկ Վերաքննիչ դատարանն այս հանգամանքի անտեսմամբ թվաբանական հաշվարկների արդյունքում 23.699.000 ՀՀ դրամի չափով բավարարել է հակընդդեմ հայցը, որի կապակցությամբ բողոքում նշված փաստարկը նույնպես Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հարցի քննարկման նպատակով անհրաժեշտ է մասնակիորեն՝ հակընդդեմ հայցի բավարարմանը վերաբերող մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 10.10.2022 թվականի որոշումը, գործն այդ մասով ուղարկել Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործը հակընդդեմ հայցի բավարարման մասով ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում այդ մասով դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մասով դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2022 թվականի որոշումը մասնակիորեն՝ հակընդդեմ հայցի բավարարման մասով, բեկանել ու գործն այդ մասով ուղարկել Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Մնացած մասով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող \_\_\_\_\_

**Գ. ՀԱԿՈՐՅԱՆ**

Զեկուցող \_\_\_\_\_

**Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

\_\_\_\_\_ **Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

\_\_\_\_\_ **Ս. ՄԵՂՐՅԱՆ**